ՇԻՐԱԿԻ Մ՝ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

5՝10.2019 №24.7

ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ , ՆՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ և ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԻ ՁևԱՎՈՐՄԱՆ , ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ:

ՇՊՀ հոգաբարձուների խորհուրդը , հիմնվելով ՀՀ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ 25 ՀՈԴՎԱԾԻ 6-րդ կետով վերապահված լիազորությունների հիման վրա , Շիրակի Պետական Համալսարան հիմնադրամի կանոնադրության 41 հոդվածի 19 կետի և ՇՊՀ ՀԽ աշխատակարգի 2. 1. 19 կետի համապատասխան

Որոշում է .

1. Ընդունել ի գիտություն գիտական խորհրդի վերակազմավորման մասին պարոն Սերոբյանի զեկուցումը ,

2. Վաղաժամկետ դադարեցնել ՇՊՀ-ի գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների լիազորությունները՝ համապատասխան նոր մարմինների կազմի հաստատման պահից:

3. Հանձնարարել ՇՊՀ ռեկտորի ժպ-ին սկսելու գործընթաց նոր կանոնադրություններին համապատասխան (այն է՝ *19.03.2019թ-ին հաստատված ՇՊՀ հիմնադրամի կանոնադրություն և 30.09.2019թ-ին հաստատված ՇՊՀ հիմնադրամի ֆակուլտետի և ամբիոնի օրինակելի կանոնադրություններ*) ՇՊՀ գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների կազմերի ձևավորման համար:

4. Միջոցառումների օրացույցը կարգավորել այնպես , որ հոկտեմբերի 22-ին ՇՊՀ-ն ունիենա նոր ձևավորված գիտական խորհուրդ , հոկտեմբերի 29-ին ունենա առաջին գիտխորհրդի նիստ և որի ժամանակ պարտադիր հայտարարվի 11 ամբիոնների վարիչների թափուր տեղերի համար մրցույթ , այն հաշվով , որ դեկտեմբերի 15-ին ՇՊՀ-ն ունենա ամբիոնների վարիչներ:

Քվեարկեցին Կողմ 11 դեմ 0 ձեռնպահ 0:

Որոշումն ընդունվեց : Բացակա էին Օ.Թերզիբաշյանն ու Գ.Բարսեղյանը:

ՇՊՀ ՀԽ նախագահ

Լ.Բարսեղյան